№ 147 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 — 1897 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16 № 147

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋԻԿԱՑ 1898 ԹԻԱԿԱՆԻ
„ՄՇԱԿ"
(26-ՐԴ ՏԱՐԻ)
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարջայա և Բարօնական փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դնիլ հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 Г. НА
„С.-ПЕТЕРБУРГСКІЯ ВѢДОМОСТИ"
ПОДПИСНАЯ ЦѢНА:

	Безъ казенныхъ прибавленій. на годъ.	6 мѣс.	3 мѣс.	1 мѣс.	Съ казенными приб. на годъ.	6 мѣс.
Съ доставкой по гор. почтѣ.	16 р.—к.	9 р.—к.	4 р. 50 к.	1 р. 80 к.	18 р.—к.	10 р.—к.
Съ пересылкою иногородн. .	17 »— »	10 »— »	5 » 50 »	2 » — »	19 »— »	11 » — »
За границу	26 »— »	14 »— »	8 » — »	3 » — »	28 »— »	16 » — »

Подписка на газету съ казенными прибавленіями принимается только на годовой и полугодовой срокъ. Въ розничную продажу казенныя прибавленія не поступаютъ.

Подписка принимается: Въ Петербургѣ, въ главной конторѣ «С.-Петербургскихъ Вѣдомостей», Шпалерная, 26, и въ книжномъ магазинѣ Мелье (Невскій пр., № 20); въ Москвѣ, въ конторѣ Н. Печковской, Петровскія линіи, № 61.

Иногородные адресуютъ: С.-Петербургъ, Шпалерная, 26.

2—3 *Редакторъ-издатель КНЯЗЬ Э. Э. УХТОМСКІЙ.*

Ալմաղ Յարութիւնեան, Վաղարշակ և Յովհաննէս Ստեփանեան, Եղիսաբէթ Մելտոնեան և Եղիսաբէթ Դաւթեան Նազարեանցները, որոնք ցաւով յայտնելով իրանց ազգականներին և ծանօթներին առաջինը՝ ամուսնու, երկրորդները՝ հօր, իսկ վերջինները՝ սկեսրայրի

ՍՏԵՓԱՆ ԱԻԱՆԵԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

մահը, խնդրում են չնորհ բերել յուղարկաւորութեան, հանգուցեալի բնակարանից՝ Կուկիա, 2-րդ Թումանեան փողոց, № 14, դէպի Կուկիայի ս. Աստուածածնի եկեղեցին, երեքշաբթի, դեկտեմբերի 16-ին, առաւօտեան 10 ժամին:

Հոգեհանգիստը կը կատարվի երկուշաբթի, երեկոյեան 6 ժամին: 1—1

Անանա Զէրքէզեան, Մանասէկ և Կոստանդին Մէլիք-Շահնազարեանները, խորին ցաւով յայտնելով՝ իրանց անմոռանալի քոյր

ԵՂԻՍԱԲԷԹ ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ դեկտեմբերի 15-ին, խնդրում են ազգականներին և ծանօթներին չնորհ բերել յուղարկաւորութեան, ներկայ ամսի 17-ին, չորեքշաբթի օր, առաւօտեան 10 ժամին, Սեմեօնովսկայա փողոց, № 20, տուն Հախվերդովի, դէպի Կուկիայի նորաշէն Ս. Աստուածածնի եկեղեցին, և այնտեղից երկաթուղու կայարանը:

Ամբիծքը երեքշաբթի օր, դեկտեմբերի 16-ին, երեկոյեան 6 ժամին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Փողոցային մամուլը բեմի վրա. Մատենագրութիւն. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Լուրեր Ալաշկերտից. Ալֆօնս Դօդէի մահը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մէլիքի աղջիկը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԸ ԲԵՄԻ ՎՐԱ

—

Մի նոր, վերին աստիճանի համակրելի ցոյց ևս: Անցեալ անգամ մենք հաղորդեցինք, որ ապականող փողոցային մամուլի դէմ խօսեցին ֆրանսիական յայտնի գրողները: Այժմ արձանագրում ենք համանման մի երևոյթ, որ տեղի ունեցաւ Մոսկվայում: Դեկտեմբերի 8-ին, Կայսերական փոքր թատրոնի բեմի վրա հանդէս բերվեց նոյն չարիքը. ներկայացվում էր «Путемъ слова» («Խօսքի միջոցով») անունով նոր պիէսը, աշխատութիւն կին-գրող Վ. օսկրեսենսկայի, որի նիւթը վերցրած էր ստորաքարշ, վաճառվող մամուլի շրջանից: Հրապարակական այդ ցոյցի նպատակը մի և նոյնն էր—ցոյց տալ հասարակութեան, որ չարիքը չափազանց մեծ է և օրէցօր զարգանալով, սպառնում է հասարակական բարքերին: Առաջարկվում էր նոյն միջոցը այդ չարիքի դէմ, ինչ որ ֆրանսիացի գրողներն էին առաջարկել. ինքը, հասարակութիւնը պիտի զինվի այդ մտաւոր քաղցկեղի դէմ, պիտի կարի, դէն գցի այդ անճոռնի պալարը, որ լափում, ոչնչացնում է հասարակական օրգանիզմը: Կար և մի այլ միջոց. դա մամուլի աղնիւ մասի մաքառումն է: Բայց, դժբաղդաբար, այդ միջոցը բաւարար չէ: Փողոցային ապականված մամուլը վերջին ժամանակ այնքան զարգացել է, այնպիսի չափեր է ընդունել, որ նրա դէմ տպագրական խօսքով կռուելն անհնարին է դարձել, անհնարին մանաւանդ այն պատճառով, որ անպիտան մամուլը ամրացրել է իր գոյութիւնը այնպիսի դիրքի մէջ, որ ինքն իրան յարգող, իր պատիւը հասկացող մամուլը երբեք չի թոյլ տայ իրան կռիւ յայտարարել, քանի որ ապականված մամուլի ղէկները ցեխից, կեղտերից են չինված: Եւ իրաւ ինչ կռիւ, գաղափարական ինչ մրցութիւն կարող են վարել ապականութեան հերոսները: Մարդիկ, որոնք չունեն սրբութիւն, բայց բոլոր սրբութիւնները ոտնակոխ անել գիտեն. մարդիկ, որոնք կարմրելու ընդունակութիւն չունեն, որոնք կարող են իրանց հակառակորդներին ՀԱՍԵԼՈՒ համար արտադրել անհնարին ցեխ և կեղտոտութիւններ: Բարոյական այդ հրէշները ընդունակ են օրեկան հարիւր չարիք փոխել, լիզել իրանց թքածը, մերժել այն, ինչ ասում էին մի ժամ առաջ. ամեն տեղ և ամեն հանդամանքների մէջ նրանք կարող են մնալ. անամօթութիւնը վաղուց ազատել է նրանց ամեն մի պարտականութիւնից, որ մարդկային հասկացողութիւններից է բղխում: Լինելով ստորաքարշ, շողոքորթ, հոգեպէս այլանդակված, նրանք խունկ են ծխում այնտեղ, ուր մի ժամանակ թափում էին իրանց հայհոյանքները և հայհոյում են նրանց, որոնց առաջ խունկ էին ծխում մի ժամանակ: Միայն մի բան է առաջնորդում նրանց—չանը: Որտեղ կայ մի կտոր հաց, այնտեղ զբաղվածառ հրէշները իրանց վայել պարեր են սարքում. որտեղ արժանանում են ուշադրութեան, այնտեղ ծխում են դնում իրանց ապականված հոգիների ամբողջ կարողութիւնը...

—Ինչու՞ վերադարձար, ասաց բէկը.—այնտեղ, զօրքի մէջ, քո բանը լաւ կը լինէր:

—Անյարմար էր, էֆէնդի:

—Ինչու՞:

Մոխտարը մի լիրը ժպիտով պատասխանեց.

—Ես նոր հակացայ մի հասարակ ճշմարտութիւն. ոչ ոք ձեռքից բաց չէ թողնում փասիանը, որ ծաեր բռնէ:

—Փասիանը... ինչ է դա նշանակում:

Պատասխանի փոխարէն նա ցոյց տուեց Աւետարանոցի կողմը և դէմքի մի շարք ճարտար ծամածռութիւններով հասկացրեց թէ ով է փասիանը:

Բէկը շարժվեց թամբի վրա, մի խիստ հայեացք ուղղեց դէպի իր խօսակիցը. իսկ նրա ձին, ըղգալով իր տիրոջ անհանգստութիւնը, գնաց արագ քայլերով:

—Ի՞նչ... Դու էլ տեսար նրան:

—Միայն կոյրը չի տեսնի այնպիսի բանը...

—Բայց լաւ էր, եթէ դու այս դէպքում կոյր լինէիր:

—Ինչու՞, էֆէնդի:

—Նրան տեսնելուց օգուտ չը կայ:

—Այդ Ալլահը գիտէ:

—Ո՛չ, ես էլ գիտեմ: Նա քոնը չէ: Նա—իմն է...

Բէօսա-Մոխտարը վաղուց սպասում էր այդ սարսափելի խօսքերին: Այդ պատճառով գլուխ չը կորցրեց, այլ իսկոյն հանգիստ ձայնով արտասանեց պատրաստ պատասխանը.

—Նա քոնն էլ չէ, էֆէնդի: Նա նշանած աղջիկ է...

Բէկը և ծիծաղեց և բարկացաւ: Նրան արդէն չարացնում էր այն հանգամանքը, որ այդ մարդը գիտէ ամեն ինչ:

—Նշանած, կրկնեց նա:—Ո՞վ ասաց:

—Երկու օր ես քարշ եմ ընկել ամրոցի պատերի տակ և հաղիւ այդքանն եմ իմացել:

—Բայց իմացել ես և այն, որ եթէ Սիւլէյմանբէկն ուզէ, նշանածը մի կողմը կը մնայ:

—Երևոյթ չեմ, էֆէնդի, որ այդքան պարզ բանն էլ չը հասկանամ: Բայց դու չես անի այդ բանը:

—Ինչքո՞ ես ասում...

—Հասկանալի է: Դու այս երկրի գլխաւորն ես և չը պիտի գործես անարդարութիւն...

—Անարդարութիւն է, եթէ ես մի հատ աղջիկ առնեմ գեաւուրներից:

—Ալլահը չանէ: Եթէ հինգը, քսանը առնես, անարդարութիւն չէ, էֆէնդի: Այն աղջիկը պիտի շատ բախտաւոր համարէ իրան, եթէ քո հարեմում աղախին դառնայ. դու և նա—նշանակում է երկինք և երկիր: Բայց չես ճանաչում գեաւուրներին: Այդ անհաւատ շները շատ մեծ կարծիք ունեն իրանց մասին. գլուխդ կը ցաւացնեն, կը գնան Գանձակ, կը դանգատվեն, լաց կը լինեն, մինչև որ փաշայի գահլէն կը տանեն: Այժմ, ի հարկէ, ոչինչ չեն համարձակվի անել, բայց շան պէս դռներ մաշելով, աղաչելով մի բանի կը հասնեն: Էֆէնդի, ես չեմ հասկանում թէ ինչու՞ այդ շները մնում են աշխարհում: Ուրիշ բան կը լինի, եթէ աղջիկը Մուրադ աղայի ապրանքը դառնայ: Ես կը կորչեմ այս կողմերից, օր ու գիշեր կը փախչեմ, իսկ դու մարդիկ կուղարկես ամեն կողմ, ինձ փընտռել կը տաս և, ի հարկէ, կասես որ ոչինչ չեղաւ: Ժամանակ կանցնի և ամեն ինչ կը մոռացվի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

—

Բէկի հետ վերադառնում էր նրա միակ թիկնապահը, տասնապետ Ահմէդը: Բայց յանկարծ փաշայի խմբից բաժանվեց Բէօսա-Մոխտարը և ձիու գլուխը յետ դարձրեց: Նա փոխեց իր միտքը. այժմ նրա ամբողջ դէմքի վրա երևում էր կատարեալ տհաճութիւն: Երկար ժամանակ նրա ձին գնում էր Ահմէդի ձիու հետ. բայց նա չէր խօսում, մինչդեռ ծերունի զինուորը յաճախ դիմում էր նրան. չը կարողանալով թագցնել իր ներքին դոհունակութիւնը, նա հիացած նայում էր բէկին և ասում.

—Փաշա... նա ծնված է փաշայութեան համար...

Բարեհոգի զինուորի այդ անկեղծ տիրասիրութիւնը, վերջապէս, այնքան ձանձրացրեց Մոխտարին, որ նա ստիպված եղաւ առաջ ընկնել. բէկի և Ահմէդի մէջ բաւական տարածութիւն կար և այդ տարածութեան կէսում պահվում էր Մոխտարի ձին:

Իսկ բէկը շատ քիչ էր յետ նայում: Փառասիրութիւնը, որ յատուկ է այդպիսի կատաղի բնաւորութիւններին, լիուլի յագուրդ էր ստանում նրա առաջ բացված մօտիկ ապագայից, վառում էր նրա մէջ հպարտութեան կրակները: Իսկ վերևից արեգակը թափում էր նրա վրա վերին աստիճանի ախորժելի լոյս: Օրը թէև պարզ, բայց ցուրտ էր: Ճանապարհը անցնում էր ծմակների միջով, որոնք դեռ բոլորովին չէին չորացել վերջին անձրևներից յետոյ: Մի-մի, երբ ճանապարհը բարձրանում էր թումբի գլուխը, կամ դուրս էր գալիս մի բաց տեղ, լեռնային աշխարհը իր հարիւրաւոր հսկայական տեսարաններով փռվում էր աջ ու ձախ, գեղեցիկ, պայծառ լոյսերով ողողված: Հեռու-հեռու ընկած էին սարերի շղթաները, որոնք արդէն ծածկված էին ձիւնով: Այդ ձիւնեղէն բարձրութիւններն էին այսպէս ցրտացնում աշնան վերջի այս պարզ օրը և այնքան քաղցրացնում էին արևի ջերմութիւնը: Մի տեսակ ծուլութիւն, դանդաղութիւն էին թափում առատ և մեղմ ճառագայթները. և բէկի ձին քայլում էր հանդարտ, կարծես ինքն էլ զգում էր թէ որքան հաճելի է այդ արևի մէջ երկար, երկար մնալը: Երբեմն ճանապարհի վրա երևում էին գիւղացիներ, հատ-հատ կամ խմբերով: Հէնց որ նրանք նկատում էին եկող ձիաւորին, խայթվածի պէս վազում էին դէպի իրանց էշերը և ջուխտ ձեռքը դնելով նրանց գաւակի վրա, հրում էին, մի ակնթարթում հեռացնում ճանապարհից, իսկ իրանք կանգնում էին նրանց կողքին, ձեռքները դնում էին իրանց կրծքին և խոնարհ գլուխ էին տալիս բէկին:

Մի մեծ ձորի կողքով իջնելիս, նա յետ նայեց, տեսաւ Մոխտարին և կանչեց.

—Ինչու՞ չը գնացիր:

Մոխտարը ձին առաջ քշեց, հասաւ նրան: Մի ակնթարթում նա այլափոխվել էր. այլ ևս վնասներ հաչող և մեծ վանդի սպասող վաճառականի տրտմութիւնը չէր նրա դէմքի վրա, այլ փոքրաւորի սովորական շողոքորթ կերպարանքը:

Պարզ է, որ այդպիսի հրէշների համար չէ սրպագրական խօսքի ազնիւ, դաղափարական կռիւը: Անուններ և տեղեր կան, որոնք միայն զզուանք կարող են պատճառել: Ահա թէ ինչու ինքն իրան յարգող մամուլը բոլորովին անուշադրութեան է տալիս վաճառվող գրիչները, չէ ընդունում նրանց գոյութիւնը: Բայց ինչ պէտք է անել, որ հասարակութիւնը չը ճնասվի միտք, գրիչ ու հոգի վաճառող մամուլից. ինչպէս պէտք է ազատվել այդ չարիքից: Կռիւը այժմ ամեն տեղ նոր կերպարանք է ընդունում. չարիքը դատապարտվում է հասարակութեան առաջ, հանվում է բեմ: Կռիւի համար հրաւէր է կարդացվում հասարակութեան. նա ինքը պիտի իր կատարեալ արհամարհութեամբ ոչնչացնէ անամօթ, լիրբ մամուլը: Ողջունում ենք այդ նոր կռիւը:

Լ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԲՈՒԴԴՀԱ“, կազմեց Սա. Մ., Հրատարակութիւն Հրատարակչական ընկերութեան, 96 երես, գինը 20 կ., Թիֆլիս, 1897 թ.

Բուդդհայականութիւնը արևելեան Ասիայի քրիստոնէութիւնն է: Նա էլ հանրամարդկային կրօն է և առաջ է եկել ի լրումն ազգային կրօնի. նա էլ հալածվել է ազգային կրօնի ներկայացուցիչների կողմից և չէ կարողացել հաստատ արմատներ զցել ու լայն ծաւալ ստանալ իր հիմնադրի հայրենիքում, որտեղ սկզբում բաւական աջողութիւն ունեցաւ չնորհիւ այդ հիմնադրի անձնական մեծ արժանաւորութիւնների և այն հանգամանքների, որ նա քարոզում էր մարդասիրութիւն և հեզութիւն, քարոզում էր հասարակ ժողովրդին և ժողովրդական լեզուով ու դիւրըմբռնելի առակների ձևով, յարձակվում էր հոգևորականների ձեռապաշտութեան ու մեծամտութեան վրա և թէև ուղղակի չէր խօսում կաստաների մասին, բայց տարածելով այն սկզբունքը, թէ փրկութեան ճանապարհը մէկ է բոլոր մարդկանց համար՝ ինչ դասակարգի էլ նը-ռանք պատկանեն, անուղղակի միջոցով քանդում էր կաստայական կազմակերպութեան հիմքը: Սակայն այդտեղ չէ վերջանում նմանութիւնը: Բուդդհայականութիւնն էլ ունեցաւ իր կաթոլիկութիւնը՝ Թիբէտում, որտեղ նստում է բուդդհայականների պապը՝ Դալայլաման: Բիկշունների (բուդդհայական կրօնաւորների) վանական կեանքը, ասում է Վեբէր, այր մարդկանց և կանանց միաբանութիւնները, նրանց երեք ուխտը՝ ողջախոհութիւն, աղքատութիւն և հնազանդութիւն, մինչև անգամ նրանց վանքերի արտաքին բարեկարգութիւնը, նրանց կրօնական կարգերը (օրդէնները) և այդ կարգերին յատկացրած զգեստները—այդ ամենը չատ յիշեցնում է միջնադարեան Եւրոպայի վանքերը. բուդդհայական հոգևորականները՝ կաթոլիկ հոգևորականների նման կուսակրօն են և նրանց նման են խուզում գլուխները: Բուդդհայականներն էլ աղօթում են տէր-ողորմեան ձեռներին. նրանք էլ ունեն խոստովանութիւն, մեղքերի դաստաւորութիւն՝ նրանց յատկացրած համապատասխան եկեղեցական պատիժներով և յատիենական տանջանքներով, ուխտադնացութեան սովորութիւն, մասունքներ, պատեր, տիեզերական ժողովներ, միսիոնէրներ, տաճարներ՝ ծածկված բարձր գմբէթներով ու լի արձաններով և աստուածապաշտութիւն հանդիսաւոր թափորներով, զանգակահարութեամբ, խունկ ծխելով ու երաժշտութեամբ: «Բուդդհայականութեան արտաքին նըմանութիւնը կաթոլիկութեան, շարունակում է հռչակաւոր պատմաբանը, այնքան զարմացնում էր առաջին կաթոլիկ միսիոնէրներին, որ նրանք բուդդհայականութիւնը համարում էին սատանայի գործ և ասում էին, թէ սատանան հնարել է ճշմարիտ կրօնի այդ պատճէնը այն նպատակով, որ ճշմարիտ կրօնը չը կարողանայ մուտ գործել այդ երկիրները (Թիբէտ և այլն)»:

Բուդդհայականութիւնը, ի հարկէ, սատանայի գործ չէ և ոչ էլ մի որ և է կրօնի պատճէն, այլ իդեալական մարդու գործ և բոլորովին ինքնուրոյն երևոյթ: Բայց այդ կրօնը Արևելեան Ասիայի կրօնն է և այդ հանգամանքը բաւական է պարզելու, թէ ինչու նա աղաւաղված քրիստոնէութեան տպաւորութիւն է գործում: Քրիստոնէութիւնը առաջ եկաւ գործունեայ, եռանդուն ու տոկուն սեմացիների՝ հրէաների մէջ, իսկ բուդդհայականութիւնը՝ հղօր ընութեան և կասայական երկպէտ կազմակերպութեան ազդեցութեան տակ ճնշված, դառն իրականութիւնից յուսահատված, փիլիսոփայասէր և անդուսպ երևակայութեան տէր քվիետիստ (հանգստասէր) հնդիկների մէջ: Այդ է պատճառը, որ մինչդեռ Աւետարանի խօսքով «հաւատք առանց գործոց մեռեալ են», Բուդդհան քարոզում էր, թէ՝ «աւելի լաւ է նստել, քան քայլել և քնել՝ քան հսկել, իսկ ամենից լաւն է՝ մեռնել»: Այդ բաւական չէ. քրիստոնէութիւնը տարածվեց յոյն-հռովմէական քաղաքակրթութեամբ թափանցված ընդունակ արիական ցեղերի մէջ, իսկ բուդդհայականութիւնը՝ կիսակիրթ կամ վայրենի դեղնամորթ ցեղերի մէջ, որոնք, անընդունակ լինելով ըմբռնել բուդդհայականութեան խոր փիլիսոփայական խմաստը, իւրացրին միայն նրա թոյլ դաւանաբանական կողմը, որ իսկապէս դատարկութիւն էր ներկայացնում, և լցրին այդ դատարկութիւնը իրանց ազգային այլանդակ մտահաւատութիւններով:

Այն բոլորը, ինչ որ մինչև այժմ ասեցինք, բաւական է բացատրելու համար այն օրէցօր աճող հետաքրքրութիւնը, որով վերաբերվում է քրիստոնեայ Եւրոպան դէպի բուդդհայականութիւնը—այդ առաջին հանրամարդկային կրօնը, այդ առաջին բարոյագիտական վարդապետութիւնը, որ բարոյականութեան հիմք հռչակեց սէր դէպի բոլոր մարդիկ, առանց ազգի և դասակարգի խտրութեան: Եթէ ավելացնենք դրա վրա այն հանգամանքը, որ բուդդհայական փիլիսոփայութիւնը կարող է համարվել պեսիմիստական աշխարհահայեացքի ամենախոր, ամենայաջորդական և ամենափայլուն արտայայտութիւնը, ավելի ևս հասկանալի կը լինի, թէ ինչու այնքան բարձր են դասում Բուդդհայի վարդապետութիւնը այնպիսի անձնաւորութիւններ, ինչպէս Շոպենհաուէր ու Ցօլատոյ և թէ ինչու մեր դարավերջի հիասթափված, պեսիմիստ քաղաքակիրթ մարդկութիւնը այնքան համակրութիւն է ցոյց տալիս դէպի բուդդհայականութիւնը, որ արևմտեան Եւրոպայի ամենակուլտուրական կենտրոններում հիմնվում են բուդդհայական կրօնական համայնքներ:

Այդ տեսակէտից նայելով, չէ կարելի չողջունել Հրատարակչական ընկերութեան ձգտումը՝ որոշ չափով դաղափար տալ հայ ընթերցող հասարակութեանը՝ Բուդդհայի անձնաւորութեան և քարոզած վարդապետութեան մասին և չը յանձնարարել ընթերցողներին պ. Սա. Մ.-ի գրքոյկը:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Դեկտեմբերի 8-ին

Դեկտեմբերի 7-ին, քաղաքային դումայի դահլիճում տեղի ունեցաւ Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողով: Ընտրվեցին հետևեալ պաշտօնատար անձինք՝ ընդհանուր ժողովի նախագահ՝ Վ. Եղիազարեանց, քարտուղար՝ Ա. Ադամեանց և քննիչ յանձնաժողովի անդամներ՝ Յ. Նազարէթեանց, Տ. Ռաշմաճեան և Ա. Տէր-Գարրիէլեանց: Ինչպէս բոլոր ընդհանուր ժողովները, այնպէս էլ այս ժողովը տխուր մտածմունքների առիթ տուեց: 220—230 անդամ ունեցող ճիւղի ընդհանուր ժողովին մասնակցում էր ընդամենը 20—23 մարդ: Չը գիտենք ինչով բացատրել այսպիսի սառը վերաբերումը դէպի մի համակրելի հիմնարկութիւն:

Բարեգործական ընկերութեան ճիւղերը ընդհանրապէս, և Երևանի ճիւղը մասնաւորապէս՝ մեծ գործունէութիւն ցոյց տուեցին վերջին տարիների ընթացքում: Մի կողմ թողած այն պարբերական նպաստները, որ անընդհատ այստեղի ճիւղը յատկացրել է չքաւորներին, աղքատներին և աշակերտներին, նրա մեծ գործունէութիւնը կայանում է երկու խոշոր ձեռնարկութեան մէջ. մէկը՝ 1894—95 թ. անբերրիութեան ժամանակ Դարաչիչագի, Նոր-Բայազէտի և Աբարանի գաւառների տառապող ազգաբնակութեան ցորենով հացրած օգնութիւնը ու մէկ էլ՝ այս վերջին 2 տարում, բարբարոս թիւրքերի սրից փախած, թշուառ գաղթականների խնամելու գործը: Այդ երկու փաստը կը մնայ ընկերութեան ճիւղի պատմութեան մէջ անմոռանալի: Այդ գործունէութիւնը, ի հարկէ, անհետևանք չանցաւ, դրանով բարձրացաւ ընկերութեան անունը և այսօր իւրաքանչիւր գիւղացի, իւրաքանչիւր գաղթական գիտէ, որ իր եղբայրակիցների օժանդակութեամբ գոյութիւն ունի մի համակրելի ընկերութիւն, որը նեղ րոպէին գիտէ և ընդունակ է իրան օգնութեան հասնելու: Ահա մի այսպիսի ընկերութեան ընդհանուր ժողովը տեղի է ունենում 20—23 անդամի մասնակցութեամբ: Երևանի հասարակութիւնը տալիս է 200-ից աւելի անդամներ, այլ խօսքով՝ նա բաւականաչափ նպաստում է: Սակայն չէ՞ որ հէնց այդ նպաստի գործադրութեան նպատակայարմարութեան համար անհրաժեշտ են որոշումներ և վճիռներ, իսկ այդ որոշումները աւելի խելացի կը լինեն աւելի շատ մարդկանց խորհրդակցութեամբ, ուստի և բաւական չէ անդամ գրվել, այլ պէտք է և յաճախել ժողովներին, մի հանդամանք, որը մոռացութեան է տրված երևանցիների կողմից:

Ա.—Դ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 15-ին

Մինչդեռ Շուշումն էի, բազմաթիւ խոչնդոտներ արգելք էին լինում կանոնաւոր կերպով հրատարակելու «Ազգագրական Հանդէսը»: Այժմ, տեղափոխվելով Թիֆլիս, յոյս ունեմ, որ աւելի նպաստաւոր հանգամանքների մէջ գտնվելով՝ պիտի կարողանամ ոչ միայն կանոնաւորել «Հանդիսի» հրատարակութիւնը, այլ և բարեփոխել: Երբ սկսեցի այս հրատարակութիւնը, ես ցոյց տուի, որ սա ժամանակի ծնունդ է: Բացի սովորական պատճառներից՝ ես չեշտեցի և այն հանգամանքի վրա, որ Անդրկովկասում կատուցվող երկաթուղիները գալիս են կարճ միջոցում կերպարանափոխելու հայկական կեանքը, որ նահապետական, ազգային կեանքի դարաւոր մնացորդները կարճ միջոցում պիտի անհետանան, եթէ այժմ ամեն ճիգ չը թափենք նրանց հաւաքելու: Այս անհրաժեշտ գործը կատարելու համար ես հրաւէր կարդացի, ինչպէս մասնագէտ, այնպէս և հայկական կեանքին քաջ ծանօթ անձնաւորութիւններին՝ միանալու և միասին գործելու: Գործի աջողութիւնը և «Հանդիսի» առաջադիմութիւնը միմիայն այդ հաւաքական ոյժերի համերաշխ գործունէութեան մէջ տեսնելով՝ ես կրկնում եմ հրաւէրը:

«Հանդէսը» դարձեալ հետևելու է երկու նպատակի, այն է՝ 1) հաւաքել և մշակել հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթեր և 2) առաջնորդել բանահաւաքներին՝ նիւթեր հաւաքելու և ծանօթացնել հայ ընթերցող մեծ հասարակութիւնը մարդաբանական գիտութիւնների հետ: «Հանդիսի» մէջ տեղ են ընդունել դարձեալ անցեալ տարիների նման նիւթեր, այսինքն. ա) Տեղագրութիւն Հայաստանի և հայ գաղութների: բ) Պատմական և մատենագրական յօդուածներ հայոց և նրանց հետ շփվող ազգերի մասին: գ) Վիճակագրական տեղեկութիւններ: դ) Ցնտեսական խնդիրներ: ե) Համայնական հողատիրութիւն: զ) Մարդաբանական հետազօտութիւններ: է) Հնախօսութիւն: ը) Ազգագրութիւն և ցեղագրութիւն: թ) Հայոց բանաւոր գրականութիւն (ժողովրդական ձայնագրված եղանակներ): ժ) Հայ գաւառաբարբառների ուսումնասիրութիւն. բառ և ոճ: ժա) Իրաւաբանական սովորութիւններ: ժբ) Գրախօսութիւն. հայերէն և օտար լեզուներով հայ ազգագրութեան և ընդհանրապէս մարդաբանական գիտութիւններին վերաբերեալ:

Ինչ վերաբերում է հրատարակութեանը, ես խոստանում եմ առաջիկայ 1898 թ. հրատարակել երկու գիրք, որոնցից մինը լոյս կը տեսնի ապրիլի 5-ին, միւսը՝ հոկտեմբերի 30-ին: Իւրաքանչիւր գիրքը բաղկացած կը լինի ոչ պակաս 20 տպագրական թերթից: Երկու գրքի բաժնը, աւելի ևս հասկանալի կը լինի, թէ ինչու այնքան բարձր են դասում Բուդդհայի վարդապետութիւնը այնպիսի անձնաւորութիւններ, ինչպէս Շոպենհաուէր ու Ցօլատոյ և թէ ինչու մեր դարավերջի հիասթափված, պեսիմիստ քաղաքակիրթ մարդկութիւնը այնքան համակրութիւն է ցոյց տալիս դէպի բուդդհայականութիւնը, որ արևմտեան Եւրոպայի ամենակուլտուրական կենտրոններում հիմնվում են բուդդհայական կրօնական համայնքներ:

Այդ տեսակէտից նայելով, չէ կարելի չողջունել Հրատարակչական ընկերութեան ձգտումը՝ որոշ չափով դաղափար տալ հայ ընթերցող հասարակութեանը՝ Բուդդհայի անձնաւորութեան և քարոզած վարդապետութեան մասին և չը յանձնարարել ընթերցողներին պ. Սա. Մ.-ի գրքոյկը:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Դեկտեմբերի 8-ին

Դեկտեմբերի 7-ին, քաղաքային դումայի դահլիճում տեղի ունեցաւ Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողով: Ընտրվեցին հետևեալ պաշտօնատար անձինք՝ ընդհանուր ժողովի նախագահ՝ Վ. Եղիազարեանց, քարտուղար՝ Ա. Ադամեանց և քննիչ յանձնաժողովի անդամներ՝ Յ. Նազարէթեանց, Տ. Ռաշմաճեան և Ա. Տէր-Գարրիէլեանց: Ինչպէս բոլոր ընդհանուր ժողովները, այնպէս էլ այս ժողովը տխուր մտածմունքների առիթ տուեց: 220—230 անդամ ունեցող ճիւղի ընդհանուր ժողովին մասնակցում էր ընդամենը 20—23 մարդ: Չը գիտենք ինչով բացատրել այսպիսի սառը վերաբերումը դէպի մի համակրելի հիմնարկութիւն:

Բարեգործական ընկերութեան ճիւղերը ընդհանրապէս, և Երևանի ճիւղը մասնաւորապէս՝ մեծ գործունէութիւն ցոյց տուեցին վերջին տարիների ընթացքում: Մի կողմ թողած այն պարբերական նպաստները, որ անընդհատ այստեղի ճիւղը յատկացրել է չքաւորներին, աղքատներին և աշակերտներին, նրա մեծ գործունէութիւնը կայանում է երկու խոշոր ձեռնարկութեան մէջ. մէկը՝ 1894—95 թ. անբերրիութեան ժամանակ Դարաչիչագի, Նոր-Բայազէտի և Աբարանի գաւառների տառապող ազգաբնակութեան ցորենով հացրած օգնութիւնը ու մէկ էլ՝ այս վերջին 2 տարում, բարբարոս թիւրքերի սրից փախած, թշուառ գաղթականների խնամելու գործը: Այդ երկու փաստը կը մնայ ընկերութեան ճիւղի պատմութեան մէջ անմոռանալի: Այդ գործունէութիւնը, ի հարկէ, անհետևանք չանցաւ, դրանով բարձրացաւ ընկերութեան անունը և այսօր իւրաքանչիւր գիւղացի, իւրաքանչիւր գաղթական գիտէ, որ իր եղբայրակիցների օժանդակութեամբ գոյութիւն ունի մի համակրելի ընկերութիւն, որը նեղ րոպէին գիտէ և ընդունակ է իրան օգնութեան հասնելու: Ահա մի այսպիսի ընկերութեան ընդհանուր ժողովը տեղի է ունենում 20—23 անդամի մասնակցութեամբ: Երևանի հասարակութիւնը տալիս է 200-ից աւելի անդամներ, այլ խօսքով՝ նա բաւականաչափ նպաստում է: Սակայն չէ՞ որ հէնց այդ նպաստի գործադրութեան նպատակայարմարութեան համար անհրաժեշտ են որոշումներ և վճիռներ, իսկ այդ որոշումները աւելի խելացի կը լինեն աւելի շատ մարդկանց խորհրդակցութեամբ, ուստի և բաւական չէ անդամ գրվել, այլ պէտք է և յաճախել ժողովներին, մի հանդամանք, որը մոռացութեան է տրված երևանցիների կողմից:

Ա.—Դ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 15-ին

Մինչդեռ Շուշումն էի, բազմաթիւ խոչնդոտներ արգելք էին լինում կանոնաւոր կերպով հրատարակելու «Ազգագրական Հանդէսը»: Այժմ, տեղափոխվելով Թիֆլիս, յոյս ունեմ, որ աւելի նպաստաւոր հանգամանքների մէջ գտնվելով՝ պիտի կարողանամ ոչ միայն կանոնաւորել «Հանդիսի» հրատարակութիւնը, այլ և բարեփոխել: Երբ սկսեցի այս հրատարակութիւնը, ես ցոյց տուի, որ սա ժամանակի ծնունդ է: Բացի սովորական պատճառներից՝ ես չեշտեցի և այն հանգամանքի վրա, որ Անդրկովկասում կառուցվող երկաթուղիները գալիս են կարճ միջոցում կերպարանափոխելու հայկական կեանքը, որ նահապետական, ազգային կեանքի դարաւոր մնացորդները կարճ միջոցում պիտի անհետանան, եթէ այժմ ամեն ճիգ չը թափենք նրանց հաւաքելու: Այս անհրաժեշտ գործը կատարելու համար ես հրաւէր կարդացի, ինչպէս մասնագէտ, այնպէս և հայկական կեանքին քաջ ծանօթ անձնաւորութիւններին՝ միանալու և միասին գործելու: Գործի աջողութիւնը և «Հանդիսի» առաջադիմութիւնը միմիայն այդ հաւաքական ոյժերի համերաշխ գործունէութեան մէջ տեսնելով՝ ես կրկնում եմ հրաւէրը:

«Հանդէսը» դարձեալ հետևելու է երկու նպատակի, այն է՝ 1) հաւաքել և մշակել հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթեր և 2) առաջնորդել բանահաւաքներին՝ նիւթեր հաւաքելու և ծանօթացնել հայ ընթերցող մեծ հասարակութիւնը մարդաբանական գիտութիւնների հետ: «Հանդիսի» մէջ տեղ են ընդունելու դարձեալ անցեալ տարիների նման նիւթեր, այսինքն. ա) Տեղագրութիւն Հայաստանի և հայ գաղութների: բ) Պատմական և մատենագրական յօդուածներ հայոց և նրանց հետ շփվող ազգերի մասին: գ) Վիճակագրական տեղեկութիւններ: դ) Ցնտեսական խնդիրներ: ե) Համայնական հողատիրութիւն: զ) Մարդաբանական հետազօտութիւններ: է) Հնախօսութիւն: ը) Ազգագրութիւն և ցեղագրութիւն: թ) Հայոց բանաւոր գրականութիւն (ժողովրդական ձայնագրված եղանակներ): ժ) Հայ գաւառաբարբառների ուսումնասիրութիւն. բառ և ոճ: ժա) Իրաւաբանական սովորութիւններ: ժբ) Գրախօսութիւն. հայերէն և օտար լեզուներով հայ ազգագրութեան և ընդհանրապէս մարդաբանական գիտութիւններին վերաբերեալ:

Ինչ վերաբերում է հրատարակութեանը, ես խոստանում եմ առաջիկայ 1898 թ. հրատարակել երկու գիրք, որոնցից մինը լոյս կը տեսնի ապրիլի 5-ին, միւսը՝ հոկտեմբերի 30-ին: Իւրաքանչիւր գիրքը բաղկացած կը լինի ոչ պակաս 20 տպագրական թերթից: Երկու գրքի բաժ-

---

վի. աղջիկը կը տանք մի մեծ մարդու, գուցէ նոյն իսկ փադիշահին, կիմանան ամենքը, որ դու ես ուղարկել... Եւ փոխարէնը դու կը ստանաս...

Նա չը համարձակվեց յայտնել դինը, որովհետև բէկը, սաստիկ վրդովված, բռնեց իր սրի կոթը և ձիու գլուխը դարձրեց դէպի նրա կողմը: Այդ առատուրը դիպաւ նրա կրքերին, որոնք այրվում էին նրա մէջ այն բոպէից, երբ տեսաւ Գայիանէին: Նրա աչքերը սոսկալի էին. այդ բոպէին նրա մէջ գործում էր այն յանդգնութիւնը, որ մի ժամանակ տարել էր նրան մինչև սուլթանի հարեմը: Եւ եթէ այժմ նրա առաջ կանգնածը ինքը, ուղղահաւատների խալիֆը լինէր, նա դարձեալ չէր կարող զսպել այդ կրքերը: Նա մոռաց, ինչ որ հայհոյանք արտասանեց: Իսկ Մուխտարը չը փախաւ, այլ, ընդհակառակն, ցոյց տուեց որ իր շահը հասկացող վաճառականը վտանգաւոր ժամին նոյնպէս անձնազոհ է և անվախ, ինչպէս բարեխիղճ զինուորը պատերազմի դաշտում:

—Խփիր, էֆէնդի, մի խնայիր, եթէ ծառադ մեղաւոր է, ասաց նա մի զարմանալի վճռական ձայնով և շարունակ նայելով բէկի աչքերին:—Իմ վիզը կտրելը նոյնքան դժուար կը լինի քո սրի համար, որքան մի ծակ վիզ կտրելը: Բայց դոնէ իմ տէրը կիմանայ...

—Ծուի վիզ, բայց կաչաղակի յանդգնութիւն, նորից մռնչաց բէկը:

Իր կատաղութիւնը նա թափեց իր գեղեցիկ ձիու վրա, մտրակի մի սաստիկ հարուած իջեցնելով նրա կողքին: Ձին առաջ նետվեց, բայց նրան պահեց սանձը, որ մի ձեռքով բռնած էր ձիաւորը: Եւ նա դէս ու դէն ընկաւ, պտոյտներ գործեց, աշխատելով գտնել յարմար բոպէն, երբ կարող էր նետի պէս թռչել:

Սիրուն արևի տակ այդ տեսարանը հիացնում էր պատճառում տատապետ Ամէդին, որ հեռուից դիտում էր երկու ախոյեանների և մեղմ ծիծաղում: Կատուն կուռում էր գայլի դէմ. հին զինուորի մէջ հրճուանքի արտասանք գրգռողը գայլն էր, այն համարձակ, կորովի տղամարդը, որի իւրաքանչիւր շարժուածքը, որի ձիու գլուսված կատաղութիւնը կարող էր արժանապէս գնահատել միայն նա, ով մաղերը սպիտակացրել է կռիւների մէջ: Բայց կատուն էլ պակաս չէր. այդ չորացած կմախքը, որ կարծես, կը փշրվէր մի հատ հարուածից, զիջողութիւն չէր անում, այլ գնում էր իր դաժան հակառակորդի դէմ: Տարօրինակ հակառակորդներ. մէկի հայեացքը կրակ էր թափում, իսկ միւսը հակադրում էր այդ կրակին հարեմական մեղկութիւնից հանգած մի խեղճ հայեացք... Եւ ինչ զարմանալի առիթներից է առաջանում պայքարը մարդկանց մէջ. վէճը մի հատ որսի վրա էր, որ դեռ չէր էլ բռնված: Վիճողներից մէկը ուզում էր նրան իր սեփական անձի հաճոյքների համար, իսկ միւսը աշխատում էր խլել, տանել ուրիշների համար, ներկայացնում էր անյայտ, պատահական մարդկանց կրքերը, ախորժակը: Երկուսն էլ յափշտակողներ էին. մէկը համարձակ, ուժեղ, ուղիղ յարձակվող, իսկ միւսը ատորաքարշ էր, թաղնվող, բայց աներես. կարողութիւնից զուրկ, բայց յենված մեծաւորների հեղինակութեան... Ո՞վ կը յաղթէր:

Ճանապարհը շարունակ դէպի բարձր էր գընում: Բլուրների ետեից դուրս եկաւ Աւետարանոցը. նա հանդարտ տաքնում էր արևի տակ, և երդիկների ծուխը մի նուրբ կապոյտ շղարշի պէս անշարժացել էր նրա վրա, խաղաղ ու մաքուր օդի մէջ: Բէկի ձին այժմ մոռացել էր իր կերած հարուածը և զգալով, որ իր տէրը այլ ևս կատաղած չէ, քայլում էր հանդարտ: Բէօսա-Մուխտարը մի զարմանալի անտարբերութեամբ նորոգեց խօսակցութիւնը, նա լաւ իմացաւ որ բէկը զիջում է:

—Գտնէ իմ տէրը կիմանայ, որ ես զոհվեցի նրա համար... Բայց ոչ, ինչու՞ նրա համար... Նա չէ ուղարկել ինձ այստեղ. նրան պատուիրել են ուղարկել, թող իմանան պատուիրողները և այնուհետև...

—Ի՞նչ պիտի անեն, հարցրեց բէկը հպարտութեամբ:

—Այն ժամանակ, էֆէնդի, փաչայութիւն շուտ կը ստանաս, շատ շուտ:

Նրա բախտն էր, որ բէկը երէկվանից անձնատուր էր եղել փաչա դառնալու մտքին: Այդ պատճառով նա թէև տեսաւ Մուխտարի լիրբ ծիծաղը, բայց պահեց իրան: Կատուն կապեց գայլի ընտանը. նա մի ակնթարթում հասկացաւ որ բռնել է գայլի կոկորդից և սկսեց աւելի խոր խրել իր ճանկերը:

—Ֆէհմի փաչայի խօսքը հաստատ էր, էֆէնդի, ասաց նա:—Այստեղի համար վճռված բան է, որ դու փաչա ես: Իսկ Ստամբուլը: Դու լաւ գիտես որ այնտեղ ոչինչ չի լինի առանց միջնորդի, առանց բարեխօսի և ընծաների: Այնտեղ բարեկամ և հովանաւոր չունես, իսկ ինչպէս քեզ կարող է ամեն մէկը. բաւական է որ իմաց տան, թէ դու մահվան դատապարտված էիր և փախել ես բանտից, իսկ այստեղ թոյլ տուիր որ կոտորեն մուսիմաններին... Մի հատ բարեկամ ունես միայն և դա Մուրադ աղան է, բայց ինչ արած, նրան չես ուզում...

—Ո՞վ ասաց...

Այս հարցը ցոյց տուեց, որ բէկը նորից ընկել է այդ մարդու ցանցի մէջ:

—Ուրիշ ինչ պիտի հասկանայ նա, եթէ լսէ որ դու սպանեցիր նրա ծառային, որ քո ծառան էլ է...

—Ո՛չ, ես քեզ չեմ դիպչի, միամիտ մնացիր... Բայց այն աղջիկը իմն է: Դու գոնը ուրիշները, հօ այս երկիրը չէ քանդվել: Սպասիր մինչև գարուն և տես ինչ լաւ գործ կունենաս: Գարունը մենք պիտի ոչնչացնենք ամեն ինչ: Ռայան մեր ոտների տակ կը լինի. Դիզակն ու Վարանդան ինձ են յանձնված. գեաւուրներից մի հատ մեծ մարդ, մի հատ մէլիք չի մնայ...

Նա յանկարծ լռեց, յանկարծ հասկացաւ, որ չը պիտի յայտնէր այս մարդուն այն, ինչ Ֆէհմի փաչան հաղորդել էր իրեն գաղտնիք: Մուրադ աղայի բարեկամութիւնը վաստակելու համար այդքանն էլ բաւական էր. զգուշութիւնը հարկադրեց կանգ չառնել ծրագրի մանրամասնութիւնների վրա: Բայց Բէօսա-Մուխտարի ականջներին հարկաւոր չէին երկար ու բարակ բացատրութիւններ. նա իսկոյն հասկացաւ և բացականչեց.

—Ողորմած է Ալլահը և միակն է նրա մարգարէն. անհաւատներից շուտով մի հատ էլ չի մնայ:

(Կը շարունակվի)

նորդագինն է երեք ռուբլի. իրաքանչիւրինը առանձնապէս՝ երկու ռուբլի:

Ե. Լալայեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խարկովի, դեկտեմբերի 9-ին

Խարկովի հայ ուսանողութիւնը, սացած լինելով բացուելցի պ. Բաղդասար Յակոբեանից 200 ռ., որ նա նուիրել է իր հանդուցեալ կնոջ յիշատակին, պարտք է համարում յայտնել իր խորին շնորհակալութիւնը թէ պարոնի նուիրաբերութեան և թէ հանդուցեալի յիշատակը յաւերժացնելու ընտրած միջոցի համար:

Խարկովի հայ ուսանողութեան կողմից՝

Լ. Շմաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 14-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի ունեցաւ Բարեգործական ընկերութեան պարահանդէսը, որ անցաւ մեծ աջողութեամբ, շնորհիւ ընկերութեան խորհրդի, խորհրդի անդամ իշխանուհի Մ. Թումանեանի եռանդուն ջանքերի և մեր հարուստ շրջանի տիկինների ու օրիորդների սիրալիր մասնակցութեան: Եթէ այդ վերջինները աւելի յաճախ ցոյց տային այդպիսի համակրելի եռանդ հասարակական գործերում, թէ օգտակար զբաղմունքներ կը մտցնէին իրանց առհասարակ անբովանդակ և ձանձրացուցիչ կեանքի մէջ և և թէ մասամբ կատարած կը լինէին իրանց հասարակական պարտականութիւնները: Կառավարչապետ իշխան Գոլիցին յարգել էր համակրելի ընկերութեան երեկոյթը, ուղարկելով 100 ռուբլի: Երեկոյթին ներկայ էր Թիֆլիսի նահանգապետ Բիկով: Ինչպէս լսեցինք, երեկոյթի արդիւնքը հասնում է մօտ 2000 ռուբլու:

—

Մեզ հաղորդում են, որ մօտ ժամանակներս սիրողների մի ներկայացում պիտի տրվի՝ յօգուտ հայ դաղթականների: Համակրելի է:

—

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցում սկսել են աշակերտական դրականական երեկոյթներ:

—

Մենք արդէն հաղորդեցինք, որ կովկասեան պօլիտեխնիկումի խնդիրը յարուցված է և կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Ընկերութեան խորհուրդը կազմեց այդ խնդրի քննութեան համար մի յատուկ նիստ, որին հրաւիրեց անդամներից շատերին: Ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ ընկերութիւնը իր կողմից պէտք է մշակի մի նոր զեկուցում և պօլիտեխնիկումի բացման անհրաժեշտութիւնը պատճառաբանի աւելի համոզեցուցիչ կերպով, քան թէ այդ արված է Թիֆլիսի դումայի զեկուցման մէջ:

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի քաղաքային դուման յետաձգեց քաղաքի փողոցները սալայատակելու հարցը և որոշեց, որ քաղաքային ուպրավան ֆինանսական յանձնաժողովի և ապագայ քաղաքագլուխ ձայնաւոր Գ. Եւանգուլովի հետ վերաքննի իր զեկուցումը և այնպէս ներկայացնի դումային: Ուպրավան կազմեց մի խառն նիստ և լսեց Գ. Եւանգուլովի առարկութիւնները, որոնք բոլորովին հակառակ դուրս եկան թէ ուպրավայի և թէ ֆինանսական յանձնաժողովի անդամների կարծիքներին: Այդ պատճառով ուպրավան որոշեց փողոցներ սալայատակելու հարցը նորից վերադարձնել դումային քննութեան համար: Գ. Եւանգուլով առաջարկել է, որ քաղաքի գլխաւոր փողոցների սալայատակելը կատարվի քաղաքի հաշուով, իսկ միւս անշան փողոցները բնակիչների հաշուով, քաղաքային վարչութեան միջոցով: Եւ մի այդպիսի աբսուրդ ասելու համար էր, որ պ. Եւանգուլով՝ ամեն տեսակ միջոցներով աշխատեց յետաձգել տալ հարցի քննութիւնը...

—

Յօգուտ Մոսկվայի կարօտ հայ ուսանողների՝ ստացանք. 1) Թիֆլիսից, մի հայ վարժուհուց, 18 ռ. 50 կոպէկ, որ նուիրել են՝ տ. Հ. Մ. 3 ռուբլի, տ. Վ. Ծ. 5 ռուբլի, օր. Ա. Մ. 7 ռ. 50 կոպէկ, օր. Մ. Ա. 3 ռուբլի. 2) Ղըզլարից, Զաքարեա Նարիմանեանից՝ 3 ռուբլի, և 3) Աստրախանից՝ Բօղդան Դ. Փարեմուզեանից՝ 21 ռուբլի, հանգանակած մի խումբ անձանց մէջ: Ուրեմն նախկին 216 ռուբլու հետ այժմ ունենք 258 ռուբլի 50 կոպէկ:

—

Մեր թղթակիցը հաղորդում է մեզ Երևանից վերին աստիճանի անախորժ մի լուր. «Դեկտեմբերի 11-ին թեմական դպրոցում տեղի ունեցաւ մի ցաւալի դէպք. տեսուչ Ն. Քարամեան ծեծվեց դպրոցում:»

—

Դեկտեմբերի 13-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում տեղի ունեցաւ Թիֆլիսի արհեստաւորների աւագի ընտրութիւնը: Ժողովը սկսվեց առաւօտեան ժամի 10-ին և վերջացաւ ժամը 4-ին: Ընտրութիւններին մասնակցում էին՝ 155 իրաւասուներ (ուստարաշի իր երկու ձայնաւորով): Նախկին աւագ կարապետ Սերովբեանց վերընտրվեց 124 ձայնով, ընդդէմ 31-ի:

—

Վաղվայ հայոց ներկայացումը, Աղնուականների թատրոնում տրվում է ի պատիւ կոմիկ Գէորգ Տէր-Դաւթեանի բեմական 25-ամեայ գործունէութեան և նրա օգտին: Պ. Տէր-Դաւթեանի թէ տաղանդը և թէ բեմական գործունէութիւնը անպայման արժանի է հայոց հասարակութեան համակրութեան և աջակցութեան:

—

Բարձրագոյն հրամանով շնորհված է ս. Անանայի չքանչանի 2-րդ աստիճանը կովկասեան ցենզուրական կոմիտեի քարտուղար Նիկողայոս Մէլիք-Նուբարովին:

—

Երկուշաբթի, դեկտեմբերի 15-ին, Թիֆլիսի քաղաքային դուման որոշեց ուպրավայի չորրորդ անդամի ընտրութիւնը յետաձգել:

—

«Рус. Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ Գրիգոր Զանչիեվի խմբագրութեամբ լոյս տեսած «Եղբայրական օգնութիւն Թիւրքիայում մնացած հայերին» գրքի հրատարակութիւնից գոյացած գումարից 20,000 ֆրանկ ուղարկվեց Կ. Պոլիս, ռուսաց դեսպանի միջոցով, իսկ 200 ռուբլի՝ Թիֆլիսի կանանց յանձնաժողովին՝ գաղթականներին օգնելու համար:

—

Դեկտեմբերի 14-ին, կիրակի, երեկոյեան ժամը 10-ին Միքայէլեան փողոցի վրա գտնվող Անանեանի տախտակի սղոցարանի կից պահեստի մէջ հրդեհ երևաց: Երկու ժամվայ ընթացքում հրդեհը ոչնչացրեց ամբողջ փայտեայ շինութիւնը. այրվեց նաև նոյն շինութեան կից քարեայ շինութեան մի մասը: Հրդեհաշէջ խումբը, տարաբաղդաբար, շատ ուշ օգնութեան հասաւ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս յայտնի է, Արթին-փաշա Ցատեանի եղբօրորդին ուղարկվել է Ժընէվ սուլթանի կողմից, հրահանգ ունենալով՝ լուծել հայ յեղափոխական կոմիտէները: Այդ առիթով եւրօպական լրագիրները հաղորդում են, որ հայ յեղափոխական կոմիտէները սպառնական նամակներ են ուղղել թէ Արթին-փաշային և թէ Օրմանեան պատրիարքին: Սակայն այժմ «Times» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Այդ լուրը անհիմն է, ինչպէս անհիմն է և այն լուրը, թէ այդ կոմիտէները դիտաւորութիւն ունեն եռանդուն գործունէութիւն ցոյց տալ՝ հայոց տօների կամ Թիւրքաց բռամազանի ժամանակ: Աւելի հաւանական է ենթադրել, որ այդ կոմիտէները մտադիր են ցոյց տալ, թէ Արթին-փաշայի եղբօրորդու միսսիան՝—լուծելու այդ կոմիտէները,—ոչ մի աջողութիւն չէ գտել:»

—

«Oeuvre d'Orient» լրագրի Վանի թղթակիցը գրում է. «Բազմաթիւ հայեր թոյլ գտնվեցին կոտորածների ժամանակ, և ընդունեցին իսլամական կրօնը, իրանց կեանքը փրկելու և իրանց ընտանիքները մահվանից աւելի սարսափելի տանջանքներից ազատելու համար: Երկիւղին տեղի տալով, նրանք սպասում են, որ երկրում հանգստութիւն տիրէ՝ կրկին քրիստոնէութիւնն ընդունելու և իրանց կրօնը դաւանելու համար: Հետաքրքիր այդ թշուառները, փոթորիկից ծածկվելու նպատակով, ուրացել են իրանց դաւանութիւնը և իրանց ազգութիւնը, և չեն համարձակվում քրիստոնէական եկեղեցու գիրկը դառնալ, մի քայլ, որի հետևանքը կը լինի մահ: Բ. Դուռը, որին դեսպանները հարցասիրում արին այդ առիթով, տեղեկութիւններ պահանջեց ընդհանուր նահանգապետ Շէմս-Էդդին-բէյից, որը շտապեց պատասխանել, թէ երկրի մէջ կատարեալ խաղաղութիւն է տիրում, թէ բռնի հաւատափոխութիւնը անծանօթ բան է իր նահանգում, թէ այն հայերը, որոնք խառնակութիւնների ժամանակ իսլամութիւն էին ընդունել, կատարելապէս ազատութիւն են վայելում վերադառնալ քրիստոնէութեանը, թէ ոչ մի գանգատ չէ եղել այդ առիթով և այլն:»

—

Վանից մի պարոն գրում է Ֆրանսիական լրագիրներին. «Ցանկալով իմանալ մօտաւորապէս մահմեդականացրած հայերի թիւը, ես շտապով հաւաքեցի մօտ տասը դաւառներում մահմեդականացրած հայերի և մահմեդականների հետ բռնի ամուսնացրած հայուհիների ցուցակը: Այդ ցուցակների կազմելը շատ դժուար է: Այդ դաւառները, ինչպէս դուք ես տեսնում էք, են՝ Արճէշ, Աղբակ, Թիմար, Գարգար, Կուշաբ, Ադիլջէվազ, Քալասար, Նօրդուզ, Կարճիկէն, Շատախ և Վանի շրջականները: Այդ երկար ցուցակներից դուրս, հէնց մի և նոյն դաւառներում դեռ շատերը կան, որոնք մահմեդականացրած են, բայց որոնք չեն մտել դեռ ես այդ ցուցակներում:»

ԼՈՒՐԵՐ ԱԼԱՇԿԵՐՏԻՑ

Սահմանի միւս կողմից եկողները ահա թէ ինչ են պատմում, որ հաղորդում ենք վերապահութեամբ:

«Բայազէտի կառավարիչ փաշան յետ է կանչված, և այդ շրջանի կառավարութիւնը՝ զօրքի հրամանատարութեան հետ միասին՝ մի բաղդաւոր դիպուածով յանձնվել է Զաքար-բէգին: Այս մարդի մասին պատմում են, որ օժտված է թիւրքաց պաշտօնեաներին անծանօթ բարեմասնութիւններով և ահա շնորհիւ իր այդ բարեմասնութիւնների՝ նա իր կառավարութեան խիստ կարճ միջոցում կարողացել է Բայազէտի սանջակում յայտնի չափով կարգ ու ապահովութիւն հաստատել, ուրիշ խօսքով՝ հայերին պաշտպան է հանդիսացել, որովհետև անապահովութեան ամենամեծ դառնութիւնը միշտ հայերի բաժինն է եղել Թիւրքիայում: Բայազէտի սանջակում ողբան քիչ են հայերը, նոյնքան աւելի են քրդերը, ողբան խեղճ են, ճնշված են հայերը, նոյնքան հզօր է քրդերի իշխանութիւնն ու ազդեցութիւնը, և այս հանգամանքն աւելի ևս զարմանալի է դարձնում Զաքար-բէգի աջողութիւնը: Վերջին տարիները Մասիսի ստորոտներում մի քրդական Արշակաւան է հիմնված, մի ամբողջ աւազակային գիւղ էր հաստատված, ուր հետզհետէ ապաստան էին գտել Կովկասի կողմերից և Թիւրքիայի զանազան անկիւններից զանազան պատճառներով խոյս տուած բազմաթիւ աւազակներ ու աւազակապետներ, իրանց ընտանիքներով: Բաւական ժամանակից ի վեր սրանք անկախ վիճակի մէջ են եղել, հարկ չեն տուել ոչ ոքի, իսկ իրանց ապրուստը հայթայթել են բացառապէս աւազակութեամբ, թալանով: Այս գիւղն ընկճելու նախկին փաշաների բոլոր ջանքերն ապարդիւն էին եղել և վերջացել բազմաթիւ զոհերով, որովհետև այդ արիւնարբու քրդերը իրանց անկախութեան դէմ ուղղած ամեն մի փորձին պատասխանել էին օրհասական դիմադրութեամբ և ի դերև էին հանել բոլոր այդպիսի ձեռնարկութիւնները:

«Սրանից մօտ 20 օր առաջ Զաքար բէգը անձամբ 500 ձիաւորների գլուխ անցած՝ յանկարծակի պաշարել է այդ գաղանների որջը և բոլոր ընակիչներին իրանց ընտանիքներով և անասուններով դերված Բայազէտ է բերել բանտարկելու: Բայազէտի հայոց առաջնորդական փոխանորդ Ներսէս քահանան միջնորդել է փաշային, որ կանանց ու երեխաներին ազատ թողնէ, քանի որ նրանք ոչնչով մեղաւոր չեն, իսկ տղամարդկանց միայն բանտարկի. փաշան քահանայի այս միջնորդութիւնը յարգելով՝ անմիջապէս ազատ է թողել կանանց ու երեխաներին, իսկ աւազակ տղամարդկանց շղթայակապ բանտարկել է: Նրանց անասուններն էլ յարքունիս է գրաւել և բաժանել է տեղական զօրքի մէջ:

«Բուն Ալաշկերտի մէջ՝ բաշքեցի քուրդ համիդականներ նոյնպէս մեծամեծ չարիքներ են հասցրել հայերին. Զաքար-բէգը լուրն առնելուն պէս յանկարծակի պաշարել է այդ ցեղի 3 գիւղը, թալանել է և կողոպուտը զրկանք կրած հայ տէրերին յանձնել: Այնուհետև խստիւ հրամայել է, որ իշխանութիւնները քրդերին ամեն մի քայլում զինաթափ անեն, նոյն իսկ ամենասովորական դաշոյնը խլեն նրանցից: Զաքար-բէգն իր այսպիսի արդարադատ խստութիւններով այնպիսի հետևանքի է հասել, որն ըստ ամենայնի փայլուն կոչվելու իրաւունք ունի: Անցուդարձը հետևացել է. հայերը բաւականին ազատ շունչ են առնում, առևտուրն անարգել կատարվում է»:

Եթէ այս լուրերը ճիշդ են (որ շատ կասկածում ենք), այն ժամանակ մեզ մնում է զարմանալ միմիայն Զաքար-բէգի անձնաւորութեան վրա, որ ներկայումս մի եզակի երևոյթ է հանդիսանում այն դժոխքի մէջ, որ Թիւրքաց կառավարութիւն անունն է կրում: Ապա ուրեմն բարի ցանկութիւնը, անկեղծ, արդարասէր զգացմունքները, հաստատ, չիտակ բնաւորութիւնները Թիւրքիայում անգամ կարող են գոնէ այնքան ժամանակ թեթև հանգստութիւն, ապահովութիւն պարգևել այդ երկրի ժողովրդի բազմաչարչար մասին, քանի որ այդ բարիքների ձայնը չէ հասել Բօսֆորի ափերին: Սակայն տեղական թիւրքերը այնքան էլ յիմար չեն, որ թոյլ տան չատ երկարի հայերի համար այդ լաւ համարված ժամանակը: Նրանք արդէն, ինչպէս պատմում են, հանրագրով բողոքներ են ուղարկել Կ. Պոլիս, խնդրելով հեռացնել Զաքար-բէգին և տալ Բայազէտի սանջակին ևս միւս վիլայէտների դրութիւնը: Փառք Աստուծու, որ հաղորդակցութիւնների դժուարութիւնը հնար չէ տուել բարձր կառավարութեանը Զաքար-բէգին անմիջապէս հեռացնել և նա դեռ մնում է. բայց էլի քանի օր...

Ա.

ԱԼՖՈՆՍ ԴՕԴԷԻ ՄԱՀԸ

Դօդէ 1882 թուականից սանջվում էր ողնածուծի անբուժելի հիւանդութիւնից, որ հետզհետէ զարգանալով, այն աստիճանին հասաւ, որ հուչակաւոր վիպագրողը այլ ևս չէր կարողանում մեն գալ առանց ուրիշի օգնութեան: Երկար ժամանակ նրան բժշկում էր հուչակաւոր Շարկօ: Հիւանդութիւնը, սակայն, չէր ազդում նրա մտաւոր կարողութիւնների վրա, չէր թուլացնում նրա ստեղծագործող ընդունակութիւնները. այդ պատճառով մինչև վերջը նա մնաց նոյն տաղանդաւոր, դիտող վիպագրողը: Հեռացած աշխարհից, նա օրեր էր անցկացնում իր կաբինէտում իր անձնական քարտուղարի հետ և անդադար աշխատում էր: Սարսափելի հիւանդութիւնը դրել էր նրա համակրելի, նուրբ դէմքի վրա վշտի ծանր կնիքը. զգալով որ բժշկութիւն չը կայ իր համար, որ կամաց-կամաց մօտենում է մահը, նա այնու ամենայնիւ, մի սիրալիր տանտէր էր, որ ընդունում էր իրան այցելողներին, ուրախութեամբ խօսում էր ամենքի հետ, ծիծաղում էր, հանաքներ էր անում: Դեկտեմբերի 4-ի երեկոյեան նա նոյն ուրախ տրամադրութեան մէջ էր, երբ ճաշի նստեց իր տանը, ընտանեկան շրջանում: Եւ մինչդեռ խօսում, ծիծաղում էր, յանկարծ գդալը ընկաւ նրա ձեռքից և նա աղաղակեց. «խեղդվում եմ, խեղդվում եմ»... Դրանք նրա վերջին խօսքերն էին: Իսկոյն նրան փոխադրեցին իր ննջարանը, վազեցին բժիշկների ետեւից: Բայց ամեն ինչ իզուր էր. նրա ոտներն ու ձեռքերը սառչում էին և վրա հասած երկու հուչակաւոր բժիշկները փորձեցին բոլոր ուժեղ միջոցները, բայց չը կարողացան ազատել նրան մահվան ճանկերից:

Երեկոյեան Պարիզի բուլվարներում և խմբագրութիւնների մէջ տարածվեց տխուր լուրը: «Դօդէ մեռաւ»: Այդ լուրը սարսափելի ազաւորութիւն գործեց. մահը անակնկալ էր, ոչ ոք չէր հաւատում: Էմիլ-Զօլա, ինչպէս հաղորդում են Պարիզից մայրաքաղաքի լրագիրներին, կէս գիշերին լսեց այդ լուրը և այնքան ապշեց, որ երկար չէր կարողանում ուշքի գալ: «Դա սարսափելի բան է, սարսափելի, ասաց նա լուրը հաղորդողին. դուք ինձ այնքան ապշեցրիք, որ ես չեմ կարողանում երկու մտքը կապել միմեանց հետ: Ախր նա իմ հին ընկերն է, աւելի քան ընկեր—նա իմ բարեկամն է և լաւ բարեկամը»: Ապա, մի քիչ հանգստանալով ֆրանսիական վիպագրութեան հսկայ ներկայացուցիչը ասաց. «Ո՛րպիսի զարմանալի գրող. և ո՛րպիսի մտածող: Բայց այս վայրկեանին մենք պիտի ողբանք ոչ այնքան մի գրող կորցնելը, որքան պիտի ողբանք այդքան բարի, այդքան առաքինի, աղնիւ և անկեղծ մարդու կորուստը: Ո՛րպիսի վիշտ. ինչ անփոխարինելի կորուստ»:

Ի դէպ. յիշենք որ Ալֆոնս Դօդէ մէկն էր այն ֆրանսիացի հուչակաւոր գրողներից, որոնք թիւրքահայերի կոտորածների ժամանակ կազմեցին մի ընկերակցութիւն և իրանց հզօր բողոքը յայտնեցին թրքական անլուր բարբարոսութիւնների դէմ: Նրանք դիմեցին և ուրիշ ազգերի գրողներին, բայց, որքան մեզ յայտնի է, միայն Ֆրանսիան էր որ կատարեց այդ մարդասէր գործը, թէև, ի հարկէ, չը կարողացաւ Հանօտոյի ուղղութիւնը մազի չափ փոխել:

Դօդէն թաղման ներկայ էին գրական աշխարհի ներկայացուցիչները և ահագին բազմութիւն: Գերեզմանի վրա, ինչպէս կամեցել էր հանգուցեալի ընտանիքը, ճառ ասաց միայն Զօլա, իբրև Դօդէի ամենահին բարեկամը:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, դեկտեմբերի 3-ին

Միմեանց յաջորդում են վրդովեցուցիչ դէպքեր Ատրպատականում: Ուրմիի նոր դէպքը օրվայ

հարց է, որի մասին արդէն գրված է ձեզ, բայց աւելորդ չենք համարում մի քանի մանրամասնութիւններ հաղորդել: Նոյեմբերի 7-ին, երեք փողատէր Թուրքեր գնում են Ուրմիից 2 ժամ հեռու Գէօգ-Թափա գիւղը՝ ասորի մի կաթոլիկ դաշայից (քահանայ) ուզելու իրանց փողը. քահանան ներկայ չէ լինում: Թուրքերը, կամենալով սպանել քահանային, հարբում են կաթոլիկ դաշայի տանը և անհնարին ցոյցեր ու պահանջներ են անում: Ցանեցիները նեղն ընկած՝ հարեւաններին օգնութեան են հրաւիրում: Գիւղացիները կարողանում են, գիւղի քէթխուդայի հրամանով, ձերբակալել երկուսին՝ կառավարութեան յանձնելու մտքով: Թուրքերից մինը փախել է, նախ քան իր ընկերների բռնվելը: Հետևեալ օրը փախչող ընկերը գիւղի սահմանում եղող գետակում է գտնվում, խեղդված: Ջրում խեղդված Թուրքի մահվան լուրը կայծակի արագութեամբ տարածվում է մոլեռանդ Թուրքերի մէջ, որոնց կատաղութեան չափ չը կայ: Ուրմիի դատաւոր Շահ-Զադա Էքբէրը Միրզան չտալիս է 70—80 ձիաւորներ ուղարկել պահպանելու գիւղը ֆանատիկոս Թուրքերի կատաղութիւնից, մինչդեռ օգնութեան հասնող ձիաւորները չարիք չէր մտածել որ չը հասցնէին գիւղացիների գլխին—ծեծ, թալան և մինչև անգամ կանանց բռնաբարութիւն...

Ուրմիի դատաւորի հրամանով կատարվեցին ձեռբակալութիւններ: Ի միջի այլոց բռնում են և ասորի բողոքականներից Դաւիթ անուն երիտասարդին, որ օգնութեան էր եկել՝ կաթոլիկ քահանայի ընտանիքը հարբած Թուրքերի ձեռքից ազատելու: Անմեղ երիտասարդը, իբրև մարդասպան ամբաստանվելով, մահվան պատժի է դատապարտվում: Դաւիթը՝ Ուրմիի նախորդ դատաւոր և Գէօգ-Թափա գիւղի սեփականատէր Սարաջ-Իվ-Սալթանայի կառապանն էր: Ուրմիի բաջ-Իվ-Սալթանայի կառապանն էր: Ուրմիի բազմաթիւ կաթոլիկ և բողոքական միսիոնէրների և այլ եւրոպացի բժիշկների ազդու միջամտութիւնները՝ անզօր են գտնվում խեղճ երիտասարդին ազատելու դատաւորի անողոք դանակից: Մի օր յետոյ, ցերեկով, Ուրմիի մեծ հրապարակում, հազարաւոր մարդկանց ներկայութեամբ, Դաւիթը գլխատվում է: Այժմ Մէքքայում եղող Սարաջ-Իվ-Սալթանէի կնոջ միջամտութիւնն ու խոստացած ծանրագին փրկանքն էլ ետ մնացան: Կան մարդիկ, որոնք այդ վարմունքը վերագրում են նոր դատաւորի խիստ տեսութեան դէպի նախորդ դատաւոր Սարաջ-Իվ-Սալթանէն, որի կառապանն էր գլխատված Դաւիթը:

Այս անցքը ծանրակշիռ նշանակութիւն ունի Պարսկաստանի բոլոր քրիստոնեաների համար այն պատճառով, որ մինչև այսօր ոչ մի դէպք և փորձ չէ եղել, որ քրիստոնեան գլխատվի, այլ գահակալ Շահերի հրովարտակների հիման վրա՝ վճռվում էր բանտ կամ աքսոր, նայած յանցանքին: Գէօգ-Թափա 2000 բնակիչ ունեցող մի գիւղ է. կէսը հին նեստորականներ են, մի մասը բողոքական ասորիներ և մի փոքր մասը կաթոլիկ ասորիներ: 1000 թումանից աւելի տուգանք վերցրին գիւղից, բացի կողոպուտներից և այլ զրկանքից: Առանձին սուրհանդակով Թաւրիզի հիւպատոսներին Ուրմիից մանրամասն տեղեկութիւններ հաղորդվեցին: Հիւպատոսները խիստ բացատրութիւն պահանջեցին Ամիր-Նիզամից, բայց տակաւին որոշ չէ բանակցութիւնների հետևանքը:

Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայից հեռագրում են, որ Պարսից ծոցի նաւահանգստային քաղաքների մօտ արաբների կասկածելի ընթացքը ստիպեց Թուրքաց մինիստրներին ուժեղացնել զօրքերը Թուրքաց սահմանի վրա: Կարծում են, որ արաբներին գրգռում են անգլիացիները:

—Կ. Պոլսից «Daily News» լրագրին հեռագրում են, թէ դիպլոմատական շրջաններում յոյս ունեն Կրետէի վերաբերեալ բանակցութիւններն աւարտել մինչև յունվարի 1-ը:

—«Frankfurter Zeitung» հաղորդում է, որ ներկայումս քննվում մի առաջարկութիւն, որ վերաբերում է Կրետէի ընդհանուր-նահանգապետի պաշտօնի թեկնածութեանը: Այդ առաջարկութեան համաձայն, այդ պաշտօնի գրաւումը պէտք է ժամանակաւոր համարվի առաջին տարին և յետոյ միայն ընդհանուր-նահանգապետը կարող է հաստատվել հինգ տարի ժամանակով: Այդ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ, եթէ մեծ պետութիւններից երկուսը կը բողոքեն նահանգապետի՝ պաշտօնի մէջ մնալու դէմ, այն ժամանակ պէտք է նոր ընտրութիւն կատարվի: Իսկ եթէ բողոք չի լինի, այդ պաշտօնը կը գրաւի առաջվայ նշանակված անձը:

—Աթէնքից «Temps» լրագրին հեռագրում են, որ պարզամենտական յանձնաժողովը տեղեկացրեց յունաց կառավարութեանը, թէ «Էնտիկէ Հէտերիա» ընկերութիւնը պատերազմի ժամանակ այնպիսի յանցանքներ է գործել, որոնց համար նա պատասխանատուութեան է ենթարկվելու, այդ պատճառով յանձնաժողովը պահանջում է, որպէս զի արդարադատութեան մինիստրը դատաստանական քննութիւն նշանակի այդ ընկերութեան մի քանի անդամների գործունէութեան առիթով:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 12 դեկտեմբերի: Պանամայի գործը: Վկաների քննութիւնը շարունակվեց ամբողջ նիստի ժամանակ, որը աւարտվեց մի ինցիդէնտով. մեղադրվողները Արտոնին զրպարտող և չարագործ անուանեցին, և այդ բանին սկսեցին ծափահարել երեք երդուեալ դատաւորները: Այդ դէպքը կարող է առիթ տալ վճռաբեկ բողոքին:

Սենատը քուէարկեց առևտրական դաշնագիրը Եապոնիայի հետ, ապա ընդունեց Գերմանիայի հետ պայմանագիր կապելու նախագիծը Տօգօ երկրի սահմանորոշութեան վերաբերմամբ:

Մէլին՝ պատգամաւորների ժողովում և Մէլիար՝ սենատում կարդացին նատաշրջանները փակելու վերաբերեալ հրամանը:

«Պասկալ» կրեյսերը կը դուրս գայ Տուլօնից և կը գնայ միանալու հեռու Արևելքում լողացող կրեյսերի հետ:

ՏՈՒԼՕՆ, 12 դեկտեմբերի: Ռուսաց «Սիսոյ Վելիկի» զրահակիրը, վերջնականապէս նորոգված, պատրաստվում է գնալ և միանալ կրետական ջրերում կենտրոնացած ռուսաց զօրաբաժնի հետ:

ԿԱՅԻՐԷ, 12 դեկտեմբերի: Դերվիշները Շէնդէից և Մետամախից դուրս եկան և գնացին եգիպտական զօրքի դէմ: Այդ շարժման նպատակը, երևի, Բէրբէրն է:

ԲԵՐԼԻՆ, 13 դեկտեմբերի: «Կայսրուհի Աւգուստա» կրեյսերը գիտաւորութիւն ունի դեկտեմբերի 14-ին Հօնկօնգից գնալ Կիաօ-Զաու:

ԿԱՆԷՑԱ, 13 դեկտեմբերի: Արմիրօի մօտ մահմեդականները սպանեցին 14 քրիստոնեայ գիւղացիներ Մալէվաղից, որոնք փոխադրում էին ուտեստի պաշարներ: Յափշտակված բեռն մահմեդականները իրանց հետ տարան Կանդիա:

Կ. ՊՕԼԻՍ, 13 դեկտեմբերի: Վաշինգտօնի թիւրքաց նախկին դեսպան Ռիֆատ-փաշա դեսպան է նշանակված Աթէնքում:

ԲԵՐԼԻՆ, 13, դեկտեմբերի: Լրագիրները հաղորդում են, որ արդէն Կիաօ-Զաու գրաւելուց յետոյ, չինաց կառավարութիւնը ծառայութեան հրաւիրեց գերմանական ինստրուկտորներին և այժմ միջոցներ է ձեռք առնում պրինց Հենրիխին ընդունելու պատշաճաւոր պատիւներով բոլոր չինական նաւահանգիստներում, ուր պրինցը ենթադրում է կանգ առնել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 դեկտեմբերի: «Сибирь» լրագրի Ճնշակալ ուղղութեան պատճառով, որ մանաւանդ երևում է այդ լրագրի 137 և 146 համարների առաջնորդող յօդուածներում, ներքին գործերի մինիստրը որոշեց՝ յայտնել այդ լրագրին երկրորդ նախազգուշութիւն:

ԼԻՕՆ, 14 դեկտեմբերի: Դեկտեմբերի 13-ին երկու արագընթաց գնացքները ընդհարվեցին Մարսէլ—Պարիզ գծի վրա: Սպանված են 3, վիրաւորված են 15 հոգի: Սպանվածների և վիրաւորվածների մէջ չը կայ ոչ մէկ օտարահպատակ:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 14 դեկտեմբերի: Մինիստրութեան մէկ անդամի յայտարարութեան համաձայն, խորհրդի մէջ վճռված է հետամուտ լինել անցքերի ընթացքին Չինաստանում, ամերիկական շահերը պաշտպանելու նպատակով. խորհրդի մէջ յայտնվեցին այնպիսի հայեացքներ, որոնց հիման վրա անհնար է համարվում դաշնակցութիւնը Անգլիայի, Միացեալ-Նահանգների և Եապոնիայի մէջ:

ՏՕԿԻՕ, 15 դեկտեմբերի: Որովհետև կառավարութեանը անվստահութեան քուէ տալը անվիճելի էր համարվում, այդ պատճառով դեկտեմբերի 13-ին կառավարութիւնը արձակեց պատգամաւորների ժողովը:

ՄԱՍՍՕՎԱ, 15 դեկտեմբերի: Երէկ կասալան յանձնվեց եգիպտացիներին:

ՋԻԿԱԳՕ, 15 դեկտեմբերի: Colosseum-ի շինութիւնը, ուր զետեղված էր արհեստագիտական ցուցահանդէսը, այրվեց. 9 մարդիկ սպանվեցին և մօտ 40 հոգի այլանդակվեցին: Նիւթական վնասները հաշւում են 700,000 դոլլար:

ՊԱՐԻԶ, 15 դեկտեմբերի: «Pothuau» և «Dupuy de Lôme» նաւերի օֆիցէրները, որոնք ուղեկցում էին նախագահ Ֆորին դէպի Ռուսաստան, պատրաստվում էին գեղարուեստական ալբոմ Ռուսաց Կայսրուհուն մատուցանելու համար:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 12-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ	. 93	ր. 50 կ.
Բերլինի վրա 100 մարկ —	. 45	» 75 »
Պարիզի վրա 100 ֆրանկ —	. 37	» 15 »
Ոսկի — — —	. —	» — »
Մաքսային կուպօններ —	. 149	» — »
Բօրսային դիսկօնտ —	. 5	»6½% »
4% պետական րէնտա	. 100⅛	» — »
Ներքին 5% առաջին փոխառութ.	. 296¼	» — »
— — երկրորդ —	. 256	» — »
5% դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	. 211¾	» — »
5% պետական երկաթուղ. րէնտա.	—	» — »
4% ներքին փոխառութեան	. 99	» — »
4½% դրաւ.թղթ.ազն.կալ. բանկի	101	» — »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	101	» — »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ	. 100⅛	» — »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	. 101	» — »
Օդեսայի — —	. 100⅜	» — »
Թիֆլիսի — —	. 99¾	» — »
Թիֆլիսի կալ. բանկի 6% —	. 102	» — »
5% — — —	. 99¾	» — »
Քութայիսի 6% — —	. 103	» — »
5% — — —	. 99¾	» — »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԵՐԵՒԱՆ. Երևանցի: Առանց ստորագրութեան ուղարկված թղթակցութիւնները չեն տպագրվում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ե. Թ. Ձեր թղթակցութիւնը՝ հայկական երեկոյթի մասին՝ ուշ ստացվեց: Գրեցէք ուրիշ նիւթերի մասին:

ԼԵՆՔՕՐԱՆ. Պ. Ծատուրեան: «Братская Помощь» գիրքը Թիֆլիսում սպառված է: Կարգադրեցէք ինչ անենք ձեր 6 ռուբլին:

ԷՋՄԻԱԾԻՆ. Ա. Եղեկեան. Ձեր զրգացված յօդուածը Երեմիա արքեպիսկոպոսի մասին՝ ուրախութեամբ կը տպագրէինք, եթէ չատ ուշ ուղարկած չը լինէիք:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ
Չորեքշաբթի, դեկտեմբերի 17-ին
Հայ դերասանական ընկերութիւնը, բարեհաճ մասնակցութեամբ տ. Սաթ. Զմշկեանի, պ.պ. Զմբշկեանի, Ա.մ. Մանդինեանի և պ. Միրաղեանի
Ի ՊԱՏԻՒ ՔՍԱՆՈՒՀԻՆԳԱՄԵԱՑ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ Պ. ԳԷՈՐԳ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
Կը ներկայացնէ
I
ՊԷՊՕ
Կոմէդիա 3 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի
(Առաջին արարվածը)
II
ՍԿԱՊԷՆԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ
Կոմ. 3 գործ. Մոլիերի, թարգ. Ց. Լալայեանի
(Երկրորդ արարվածը)
III
ՀԱԶԱՐ ԹՈՒՄՆԱՆՈՑ ԿԱԲԱՅ
Կոմէդիա 1 գործ. հեղ. Փուղինեանի
Սկիզբն է ճիշդ ժամը 8-ին: Տօմսակները վաճառվում են թատրօնի կասսայում: 1—1

ԴԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆԸ 50 ԿՕՊԵԿ
և երկրորդ հրատարակութեամբ նորերս լոյս ընծայված հետևեալ 5 կօպէկանոց ժողովրդական գրքերը՝ 1) ԵՂԲԱՅՐ ԵՂԲՕՐ ԴԷՄ՝ Վիկտոր Հիւգոյի, 2) ԱՐՆԱԳԻՆ՝ Լէօի, 3) ՊՍՏԻԿ Է, ԲԱՅՑ ՉՍՏԻԿ Է՝ Վ. Լունկեվիչի և 4) ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ՝ տ. Գանիէլի, վաճառվում են Խոխանցի գրական պիտոյքների խանութում՝ Մէքայէլեան կամուրջի վրա: Նոյն գրքերը մեծ քանակութեամբ ձեռք բերել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Куки, Реутовская № 13, Іосифу Ивановичу Караеву.
(№ 147) 1—3

ՖՕՆՕԳՐԱՖԻԱ
Գոլովինսկի պրոսպէկտի վրա № 14
Ծախվում են նոր և էժան ՖՕՆՕԳՐԱՖՆԵՐ:
(№ 134) 5—5

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 ГОДЪ НА ГАЗЕТУ
53-й годъ „КАВКАЗЪ." 53-й годъ
Съ 1-го января 1897 года газета „Кавказъ" издается подъ редакціей
В. Л. ВЕЛИЧКО,
Въ 1898 году газета будетъ издаваться по той-же программѣ, какъ и въ прошломъ году.
Подписная цѣна остается безъ измѣненія, а именно:

Съ доставкою въ Тифлисѣ:	Съ пересылкою иногороднымъ:	По почтовому союзу:
На годъ . . . 11 р. 50 к.	На годъ . . . 13 руб. —	На годъ . . . 18 р. 40 к.
„ ½ года. . 6 „ — „	„ ½ года . 7 „ —	„ ½ года . 10 „ — „
„ 3 мѣс. . . 3 „ 50 „	„ 3 мѣс . . 4 „ —	„ 3 мѣс.. . 6 „ — „
„ 1 мѣс. . . 1 „ 50 „	„ 1 мѣс . . 1 „ 75 к.	„ 1 мѣс.. . 2 „ — „

Разсрочка допускается для годовыхъ подписчиковъ по соглашенію съ редакціей, причемъ иногородными вносится по 3 руб.: при подпискѣ, 1-го марта и 1-го мая и по 2 руб.—1-го іюля и 1-го сентября; городскими въ тѣ-же сроки: 3 р., 3 р., 2 р., 2 р., и 1 р. 50 к.
Контора „Кавказа", во избѣжаніе недоразумѣній, проситъ г.г. иногородныхъ подписчиковъ точно опредѣлить, въ случаяхъ высылки денегъ менѣе 13 рублей (цѣна годовой подписки), желаютъ-ли они получать газету въ разсрочку, или на сроки, соотвѣтствующіе присылаемымъ суммамъ.
NB. Подписка и объявленія принимаются по нижеслѣдующему АДРЕСУ: Г. Тифлисъ, Эриванская площадь, домъ Харазовой.
Тамъ же принимается подписка на телеграммы «Россійскаго телеграфнаго агентства».
Плата за объявленія (со строки петита или занимаемаго ею мѣста) На послѣднихъ страницахъ: съ мѣстныхъ объявленій (кавказскихъ)—8 коп., съ прочихъ—10 коп., за каждый разъ. На первыхъ страницахъ вдвое. За большія или многократныя объявленія по соглашенію. За разсылку особыхъ приложеній 10 рублей съ тысячи.
Частныя объявленія изъ С.-Петербурга, Москвы, Царства Польскаго, Прибалтійскаго края и. за границы принимаются исключительно въ Центральной Конторѣ объявленій торговаго дома Л. и Э. Метцль и К° въ Москвѣ (Мясницкая, домъ Сытова) и въ его отдѣленіи въ С. Петербургѣ, (Большая Морская, № 11). 1—3

ԱԼԻԻՐԱՂԱՑՆԵՐ՝ ԳՈԼՈՐՇՈՒ ԶՐԻ և ՁԻԱՌԱՐԾ
Պատրաստում է, ինչպէս մանագիտութիւն, ԻՆԺԵՆԵՐՆԵՐ
ԵՄԲԱԼՕՎԻ ԵՒ ԱԼԻԽԱՆՕՎԻ
Գործարանը, Թիֆլիսում, Ալէքսանդրեան փողոց, սեփական տունն:
(№ 102) 37—0

ՐԱՖՖԻԻ

«ՍԱՄՈՒԷԼ» ա. բ. և գ. գիրք:
«ԴԱՒԻԹ-ԲԷԿ» ա. բ. և գ. գիրք վերջաբանով և
«ԿԱՑԾԵՐԻ» երկրորդ լիակատար հատորի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է մինչև «ՍԱՄՈՒԷԼԻ» լոյս տեսնելը: Ամեն մի գրքի գինն է 2 ր. 50 կօպէկ.
Երեքի գինը միասին 6 ՌՈՒԲԼԻ:
«ՍԱՄՈՒԷԼ» մամուլի տակն է և լոյս կը տեսնի յունվար ամսին: Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի «ՈՍԿԻ ԱՌԱՂԱՂ», գինը՝ 70 կ.
Ցանկացողները կարող են դիմել թէ բաժանորդագրութեան և թէ Ռաֆֆիի վաճառելի երկերի համար՝ Ռուսաստանում՝ ТИФЛИСЪ, Аршаку Раффи. Արտասահմանում՝ M-me Rafi. 270, Uxbridge Road, Shepherd's Bush, LONDON W.
(№ 127) 7—15

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Декабря 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.